

ԱՐՏԱՇԵՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(ԾՆԵՂՅԱՆ 115-ամյակի առթիվ)

Առողջապահական որոնումների ղեկավարին, քայլ ընդունեալն ապար: է անցել Մալգարացի Կարոն՝ Արտաշես Հարությունյանը: Այդ որոնումների ճամփին իր գրական ուղին արդեն դրու: Հանաչված բանասանդո ու քննադատ էր, երբ նրան տարան ու ալլես էտ շեկավ: Նա դարձավ 1915 թ. գոհերից մեկը: Նրա անհայտ շիրիմի վրա որպես հուշարձան մնացին քաղաքականության և արվեստի հուշարձանները: Քննադատական հոգվածների շարքը և արձակ բանաստեղծությունները:

Միտք դրժելով արևմտահայ գրականության մեջ անցյալ դարի վերջին քառորդին, Հարությունյանը դիմելու էր իր նախորդներին՝ Մ. Զևարդի, Ա. Զոհրաբյանի, Լ. Բաշալյանի: Կրթական դպրոցի ավանդներին, ինքնազարգացմամբ իր արվեստը հասցրեց կատարելության և դարձավ դրական նոր սերնդի լավագույն դեմքերից մեկը:

Վաղ ասակից են սկսել զարգանալ Հարությունյանի բանաստեղծական հակումները: Առաջին գրական մկրտությունը նա ստացավ Պերպլյան վարժարանում՝ Քուրաստան մանկանց՝ պարբերականում տպագրելով իր անդրանիկ ոտանավորը՝ «Կենտասին»: Այնուհետև նրա բանաստեղծությունները տպագրվել սկսեցին մյուս հայկական թերթերում, անուն և ճանաչում բերելով երիտասարդ բանաստեղծին:

Սակայն Հարությունյանի համար բախտորոշ եղավ Արփար Արփարյանի «Հայրենիքին» աշխատակցելը, ուր տպագրվում էր նրա «Գալիստական պատկերներին» շարքը՝ «Կարոն» ծածկանունով: Այդ անվան կնքահայրը հանդիսացավ Արփարյանը: Հետագայում, թյուրիմացություններից խուսափելու համար, ստորագրեց իր անուն ազգանունով: Իր թերթում տպագրելով Հարությունյանի «Գալիստական պատկերներ» շարքը, Արփարյանը խրախուսեց երիտասարդ գրողին, բարձր գնահատեց նրա արվեստը, հուշակնք նրան ինքնատիպ գրող, ռորը տոհմային դիմագիծ ունեցող իրապաշտ գրականություն մը կը մշակեր: Արփարյանը՝ եղավ գալիստական գրողներ Քլկատինցու, Հարությունյանի, Մշո Գեղամի, Ռուբեն Զարդար-

յանի և ուրիշների գրական պաշտպանը, իր թերթի էջերում լայն տեղ տալով նրանց ստեղծագործություններին: Քլկատինցին ու Հարությունյանը Արփարյանին են պարտական իրենց բարեկամությունը, որը տեկց մինչև նրանց եղբորական մահը: Հարությունյանը Քլկատինցուն անվանեց իր «լուսադարձ»՝ Եվ պատահական չէր, որ նա իր բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն՝ «Նոր քնար»-ը, նվիրեց Քլկատինցուն:

Արևմտահայ գրականության այն շրջանում, երբ գալիստական գրականության վարպետները իրենց առատ հունքն էին բերում գրականությանը, Պոլսի և արտասահմանի հայ միտքն ու խոսքը քայլում էին ավանդական միտքի սահմաններից: Հարությունյանը Քլկատինցու, Զարդարյանի հետ առաջ մղեց գալիստական գրականությունը, այն հասցնելով զարգացման որոշակի աստիճանի:

Դեռևս Օսմանյան սահմանադրությունից առաջ պայքար էր սկսվել պոլսահայ և գալիստական գրականության միջև: Գալիստական գրականության ներկայացուցիչները ցանկանում էին ստեղծել ժողովրդական գրականություն՝ զերծ ֆրանսիական ազդեցությունից, զերծ կնդդ գալիստականությունից: Օսմանյան սահմանադրությունից հետո էլ գալիստական գրականությունը զգացնել տվեց իր գոյությունը, մինչև որ առաջին համաշխարհային պատերազմը եկավ լուծեցնելու գալիստի գրողների ձայնը:

1900 թ. հունիսի 14-ին «Մասիս» թերթի խմբագրությունը իր աշխատակիցներին և ընթերցողներին ուղղեց մի հարցարան, որը կազմել էր Արտաշես Հարությունյանը: Հարցարանի նպատակն էր քննության ենթարկել հայ գրականության հարցը: Այդ հարցարանին հետևեցին Հարությունյանի մի քանի բացատրություններն ու եզրակացությունները, տեսականները: Հարցարանը մեծ հետաքրքրություն և աշխուժություն առաջ բերեց գրական շրջաններում և տեղիք տվեց տաք բանավեճերի:

Ա. Հարությունյանը, խոսելով վաղվա գրականության մասին, առաջ քաշեց գալիստական

գրականության հարցը. «Ի՞նչ կը խորհիք գավառական գրականության մասին,— գրում էր նա իր հարցարանում:— Ըստ Ձեզ գավառական գրականությունն ընդունակ է ակնարկված ռոտըշչուությունն իրականացնելու, թե՞ մեր գրականության մեջ անոր գոյության իրավունքը պեսպեսության մը, դանդաղության մը, մասնաճյուղի մը հանդամանքով միայն ընդունելի կը նկատեք, Իսկ եթե կընդունիք գավառական գրականության կարևորությունն ու առավելությունը պոլսականի վրա, զոտ հայեցի ներշնչումով ու իսկատիպությամբ գրականություն մը ծաղկեցնելու ծրագրին իրականացման տեսակետին, ըսի Ձեզ ո՞րոնք են այն միջոցները, որոնցով գավառի գրագետները դործնական վիճակի պիտի ունենային այդ գրական ծրագիրը դործագրելու: Այդ պարագային, ի՞նչ պիտի ըլլար պոլսեցի գրագետի դերը վաղվա գրականության նկատմամբ և ի՞նչ կը խորհիք այդ պարագայի մասին»:

Գրական այդ կարևոր հարցի առթիվ քանակե՞նք մեջ մտնելով Ռեթեոս Պերպերյանի հետ: Հարությունյանը գտնում էր, որ հայությունը գավառներում ավելի ինքնուրույն կյանքով է ապրել և ապրում է, քան Պոլսում և այլ դաղթօջախներում: Պոլսի միայն մտքի կենտրոնն է, բայց ոչ հարազատ ներկայացուցիչը նրա գրագետի: Հարությունյանը գտնում էր, որ Պոլսը լինելով այլասեռ բարձր կենտրոն, անխուսափելի կերպով իր կնիքն էր դնում գրսից եկած բոլոր տարրերի վրա, որոնք ընկնում են այդ ազդեցության ոլորտը, և ազգային նկարագիրը խաթարվում էր օտար բարձրից: Խոսելով պոլսահայ գրականության մասին, Հարությունյանը գտնում էր, որ այդ գրականությունն ինքնուրույն չէ, մասամբ ընդօրինակություն է ֆրանսիական ուսմանտիկ դպրոցի, թեև չէր միտում Մ. Պեշիկթաշլյանի, Տյուսաբի, Զոհրապի տաղանդն ու հայ գրականությանը մատուցած նրանց ծառայությունները: Ամփոփելով իր տեսակետները գավառի գրականության մասին՝ նա պնդում էր, որ պոլսահայ գրականությունը հեռու է հայ կյանքի արտահայտությունը լինելուց:

Գրական այս քանակե՞նք ընթացքում Հարությունյանը նույն համարակությունը գրեց հայոց լեզվի հարցը: Զմոռանա՞նք ասել, որ արևմտահայերի մեջ վաղ սկսված պայքարը գրաբարի տիրապետության դեմ ավելի երկար տևեց և ուշ հաղթանակեց, քան Արևելյան Հայաստանում: Հարությունյանը սկզբունքով չէր միտում գրաբարը, նա մեծ հիացմունք ուներ այդ լեզվի գեղեցկության ու ճոխության հանդեպ: Նա պայքարում էր գրաբարի առաջնությունը դեմ և աշխարհաբար լեզվի մեջ

նկատված դարարամուլ ձևերի դեմ, որոնք վնասում էին աշխարհաբար լեզվի մաքրությունն ու հստակությունը:

Քանակե՞նք մեջ մտնելով հայ մտավորականության մի մասի հետ, նա հիմնավորեց իր տեսակետը այսպես՝ պոլսահայ բարբառի իր բառապաշարով, աղբատիկ հոմանիշներով նույնպես ի վիճակի չէ համարվելու արևմտահայ հատվածի գրական լեզու: Զմոռնելով պոլսահայ բարբառի ընդհանրությունն ու նմանությունը արևմտահայ բաղմաթիվ բարբառներին, Հարությունյանը գտնում էր, որ արևմտահայերեն գրական լեզու դառնալու համար պոլսահայ բարբառը պետք է հարստացնի իր բառաֆոնդը մյուս բարբառների հոմանիշներով և ածականներով, որոնք չկան պոլսահայ բարբառում: Հարությունյանի նպատակն էր ամրացնել հայ լեզուն, գերծ պահել լեզուն ու գրականությունը օտար ազդեցություններից ու խաթարումից:

Գրականության մեջ ինքնաճանաչման փորձերն է, զոր կուզենք ընել, խաթարումն և օտար ազդեցություններն զերծ: Անոնք, որ անխափ և խոր գիտակցություն ունին վաղվան գրականության կարևորության, չպիտի սպասեն, որ պոլսեցիները նվիրագործեն դանի: Դադափարը ինքնին պիտի ընդունվի՝ ճշմարտության ուժին շնորհիվ՝ զոր իր մեջ կը պարունակեն: Մտածելու նոր եղանակ մըն է ասիկա՝ որ այսօր հաղիվ թե կը ցնծա, բայց վաղը հոսանք պիտի կաղմե, ու անոնք, որ այսօր կը համառին ճշմարտության լույսը ուրանալ, հավատացյալներու պիտի փոխվին առանց գիտնալու, ինչպես աշխարհաբար դրել սկսան առանց ուղեւորու:

Չնայած այն հանգամանքին, որ Ա. Հարությունյանը իր ողջ կյանքում ապրեց գավառում՝ հայրենի Մալգարա դյուղաքաղաքում (Ռոդոստոյից հյուսիս-արևելք), սակայն կառված լմնաց գավառական կյանքի նեղ շրջանակին: Նա կապվեց համաշխարհային գրականության հետ, ինքնուրույն սովորեց ֆրանսերեն լեզուն, տարվեց փիլիսոփայությանը, յուրացրեց հին ու նոր փիլիսոփայական վարդապետությունները, ուսումնասիրեց մարդաբանությունը, հնէաբանությունը, աստղագիտությունը, Նրա անհազ միտքը մի ընդունարան էր գիտելիքների ու դադավարների: Նա աչքի ընկավ Քրյուսկան պարբերականում տպագրած իր մի շարք հրատալեց հոդվածներով: Նրա զընն են պատկանում մանկավարժական հարցերին նվիրած շահեկան հոդվածներն ու ուսումնասիրությունները:

Ա. Հարությունյանը ծանոթ էր ֆրանսիական գրականության հին ու նոր դեմքերին. գիտե՞ր անգլիական, ֆլամանդական, գերմանական

սկանսինություն, ուսումնական մաքի ու գրչի աշխատանքային վարակտները դործերը՝ Մինչև կյանքի վերջին օրերը «Մերկուր դր Ֆրանսա» գրական մեծ պարբերականի բաժանորդ մնաց։ Նա հրական կապերի մեջ էր ֆրանսիական նոր շրջանի գրողների հետ, նամակներ էր ստանում բելգիացի նշանավոր բանաստեղծ էմիլ Վերհարնից։ Ռեմի դր Կուրմոնից, որի պատճառով, որպես զավաղի, լրտեսվում էր թուրքական իշխանությունների կողմից, 1906 թ. ֆրանսիացի նշանավոր բանաստեղծ Ռենե Կյուլլը Հարությունյանին է ուղարկում իր Երկասիրությունները, Հարությունյանը հիացած էր Ֆլորենտի, Բալյակի ստեղծագործություններով, սիրում էր Վերհարնին, հրաշալի դիտեր Մալարմեն, Պիևս Լուսիս, պաշտամունք է ունեցել Անատոլ Ֆրանսի նկատմամբ, որի փխրափայլությունից յուրացրել էր նրա անխոցելի հեղանքը։

Հարությունյանը թարգմանել է համաշխարհային գրականության դասականների գործերը՝ Ռոդերից կատարած թարգմանությունները տրպարովեցին նրա կենդանության օրով։ Ռուս դասականներից նա թարգմանել է Գուրու և Լ. Տոյստոյի ստեղծագործություններից և տպագրել Պոլսի «Չայն հայրենյաց» պարբերականում, իսկ համաշխարհային պաակարգմից հետո դրանք տպագրվել են առանձին գրքով։ Նա թարգմանել է ֆրանսիական հայտնի «Մարդկության մեծ լեզունը» ավանդավեր, որի երկու դուխները կրել են, անավարտ է մնացել «Ֆաստախ» թարգմանությունը։

Նա լայնորում էր Օմար Խյամին, որի քառյակներից մեկի վերջին տողը կրկնել է հաճախ. «Իթև աանր մարդ կա, մեկ բառը բավ է»։ Սիրել է մեր հին բանաստեղծությունները, որոնցից, ընդորինակություններ կան իր ձեռագրերի մեջ, սիրելով հայրենականը, չէր ժխտում տարի լավը, համամարդկայինը, նորը, թարմը։ Հարությունյանն ուներ ժամանակի, նորի մտածողություն, նորի զգացողություն։ Այդ էր պատճառը, որ ողջ կյանքում ապրելով զավառում, չմնաց զավառացի գրող։ Համաշխարհային գրականության ազդեցությամբ նրա գաղափարական պատկերներին հաջորդեցին մոգեոն բանաստեղծությունները և ժամանակակից ոգով գրված քննադատական հոդվածներն ու արձակ բանաստեղծությունները, որոնք միանգամայն նորություն էին արևմտահայ գրականության մեջ։

Համիդյան դաժան ռեժիմի պատճառով ինչպես շատերին, այնպես էլ Հարությունյանին արգելված էր հեռանալ Երկրի սահմաններից։ Նա իր ողջ կյանքում ապրեց հայրենի Մալգարայում՝ ապավինած իր խանութին ու գրչին։ Ընտանիքական մեծ բանաստեղծության մեջ, որն առնչվում էր նշանակությանը, այս-

պես է նկարագրում իր կյանքը.

Գավառի մի խորը երկրի մ' աննշան,
Ավան մը հին փողոցին անկյան մոտ,
Խանութ մ' ունի փերեզակը մշտաշփոթ,
Կրպակ մը՝ զոր իր պապն է ժառանգած։
Այդ կրպակը՝ սահմանն է իր գոյության,
Շրջագիծը անհեղին՝
Իր աննշան ու անշշուկ կենցաղին.
Այդ կրպակը՝ իր խոհերուն թանկագին
Նվիրական սուրբ բազին։

Հարությունյանի տաղանդը փայլեց նաև նրա արձակ գործերում։ Ազդվելով Վերհարնի արձակ բանաստեղծություններից և սիրելով դրական այդ ժանրը, իր ուժերը փորձեց այդ բնագավառում և մեծ հաջողություն ունեցավ։ Նրա «Մախր և մոխիր», «Բարառումներ» արձակ բանաստեղծությունները մեծ ներշնչումով և հուզականությամբ գրված տողեր են։ Հարությունյանի ստեղծած պատկերները այնպես տպավորիչ և հուզիչ են, որ երկար են մնում մարդու հիշողության մեջ։

Վաղ հասակից Հարությունյանը սկսեց գծել գրական դիմանկարներ, բայց դատելու ինքնատիպ եղանակը ճշտվեց հասունության տարիներին։ Նրա՝ որպես քննադատի համարվել տարածվեց այն ժամանակ, երբ «Բյուզանդիոն», «Ադատամարտ», «Շանթ» պարբերականներում տպագրեց իր հոդվածները ժամանակակից բուլլոր գրական հրատարակությունների մասին, ճիշտ գնահատելով հեղինակներին և նրանց ստեղծագործությունները։ Նրա զուսպ, խնամքով գրված էջերում երևաց քննադատի գիտողի ու դատողի միտքը։ Զերկնելով իրեն, նա միշտ նոր խոսք է ասել այս կամ այն հարցի քնննության առթիվ, թելադրել ուղղություններ, առաջարկել նոր մտքեր։ Հարությունյանի հոդվածները գրված են մաքուր ու զեղեցիկ հայերենով։ Նա ներողամիտ էր սկսնակների նկատմամբ, բայց անողոք էր այն գրողների հանդեպ, որոնք ուզում էին հեշտ ճանապարհով հասնել մեծ համբավի։ Նրա հեղեղ գրիչը ձաղկում էր բոլոր միջակություններին, ջանք չէր խնայում գնահատելու, վեր հանելու իրական արժեքները։ Հայտնի է, թե ինչպես իր քննադատական հոդվածներում անալատություն հանդես բերեց և իր դեմ հանեց ժամանակի նշանավոր գրող Եղիա Տեմիրճիպաշյանին, Արփարյանին և ուրիշներին։

Մեծ հոգատարությամբ ու ակնածանքով էր վերաբերվում իսկական տաղանդների հետ։ Ա. Հարությունյանը հայտնաբերեց Միսաք Մեծարենցին այն ժամանակ, երբ դեռ ոչ ոք չէր կարդացել նրա բանաստեղծություններին ձեռա-

դիր տևողությամբ Գեղամ Բարսեղյանի միջոցով Մթնոստանի բանաստեղծությունների ձեռագիր տևողությամբ հասնում է Հարությունյանին: Երիտասարդ բանաստեղծի մեծ տաղանդով հմայված, նա հիացմունքի խոսքեր դրեց հիվանդ բանաստեղծի մասին, դրվատեց նրա շողշողուն տաղանդը: Իսկ երբ հրատարակվեց Մեծարենցի բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն, Հարությունյանը շուշադրեց իր խոսքը: «Միսաք Մեծարենց պարզ տաղաշափ մը չէր. բանաստեղծ մըն էր.—դրո՞ւմ է Հարությունյանը:—Մարդիկ բռնի բանաստեղծ չեն ըլլար, թեև լայնքան բռնի կրնան ըլլալ՝ ճարտար հանդակառամներ: Բանաստեղծ կը ծնին կամ՝ ոչ: Իրենց ձեռնդրը դրոշմող և իրենց ճակատագրին վրա փայլող աստղը կը վճռէ դադար Մեծարենց լուսնին աղղկացության տակ ծնած հոգի մըն էր, դժգոհություններով, պաշտամով, զորովով, միստիկ վերացական տենչերով շաղկապած ընտրյալ մար: Բանաստեղծ էր, ժամանակ լուսնեցած ըլլալու արվեստագետ: Առանց խնդրի՝ աղանդական՝ բացարձակ նշանակություն ունի՝ միթե արվեստար: Աստուծո՞ւ համար է, որ կը սիրենք դիմքը: Եղբարիտ բանաստեղծը՝ օտար մը չէ՝ այլևս մեզի համար: Եղբայր մըն է, բարևակամ մըն է, որուն հետ համակրության անբաժանելի կապերով կապվում ենք: Իր բոլոր պագուսները, իր բոլոր հույզերը, իր բոլոր երազները մերին են: Իրեն մոտ կուլանք, իրեն հետ կը ժպտինք, իրեն հետ կը սիրենք: Իր էությունը հարկադրական հատուցում մըն է:»

Արձագանքելով ժամանակի գրական հարցերին, Հարությունյանը գրեց «Գրական գիմաստվերներ» քննադատական հոդվածների շարքը՝ նվիրված ժամանակի գրական խոշոր դեմքերին (Նղ. Տևմիրճիպաշյան, Տիրան Չրաքյան, Գաղանճյան և ուրիշներ): Հատկապես արժեքավոր են «Մասիս» հարցարանի առիթով նրա գրած «Վաղվան գրականությունը», «Գրքեր և դեմքեր» հոդվածաշարերը: Նրա գրչին են պատկանում նաև փիլիսոփայական արժեքներ կայացրած ուսումնասիրությունները «Գրականություն և արվեստ» խորագրով, ուր նրա բյուրեղացած միտքը խորանալով գործել է ճշակ, հավատ և անկեղծություն: Հարությունյանը հայ գրականության պատմության մեջ մնալու է իրեն բացառիկ անհատականությամբ ու մեծ տաղանդով օժտված մտավորական, որն իր ողջ էությունը օժեց արվեստի սիրով և մնաց գեղեցիկի սիրահար:

Գրականության սերը վտանգի տակ գրեց Հարությունյանի կյանքը: Հետևելով ֆրանսիական նորագույն գրական շարժմանը և գաղտնի ու տեղական հարաբերության մեջ մտնելով արտասահմանի առաջավոր գրական դեմքերի հետ,

կասկածի տակ առնվեց թուրքական «սուրբ» նություն կողմից և մտավ Եսեն ցուցակի մեջ: Այդ շրջանում նա ֆրանսիական մամուլում հոդվածներ էր տպագրում հայ ժողովրդի հրազանդի և նրա բաղադարյան գրականության ու մշակութային մասին: Գիտեի, որ հետապնդում են իրեն, բայց ինչ փուլի, գրում էր իր ժողովրդի մասին, աշխարհին էր ներկայացնում մեր բաղադարյան գրականությունն ու արվեստը:

Հայրենասեր էր Հարությունյանը. նրա համար հայրենիքի գաղափարը սոսկ խոսք ու երևակայություն չէր, այլ բովանդակություն ու առաջադեմ: Ուրում էր տեսնել իր ժողովրդի վերածնունդը, տեսնել նրան լուսավոր, քաղաքակրթված, հավասար մյուս ազգերին:

Համիդյան շրջանում Հարությունյանը գաղտնարար թղթակցում էր Սուրեն Պարթևյանի կողմից Մանչեստրում լույս տեսնող «Վաղվա» հանդեսին և նրանից ստանում էր մամուլ և գրականություն, որը այդ օրերին նրա կործանման պատճառ էր դառնալու, եթե ընդհանրապես մեկը այդ գրականությունը չհրկրեր ոտսիկանություն ճանկերից:

Բալկանյան պատերազմի տարիներին ինչպես Պոլիսը, նույնպես և Մալգարան գրավվել էր բուլղարական զորքերի կողմից: Հարությունյանը ողջունում է բուլղարական զորքի մոտքը հայրենիք և ամեն կերպ աշխատում, որ հայությունը թողնի իր ունեցած թուրքական լուծը: Բանակցությունների մեջ է մտնում բուլղար հրամանատարության հետ: Քանի որ բուլղարիան ընդարձակվելու էր, Միտա էնոս գծով և այդ սահմանից դուրս մնացող հողերը մնալու էին Բուլղարիայի սահմանում, Հարությունյանը աշխատում էր, որ Մալգարան ևս մնա այդ գծի մեջ: Թուրքական իշխանությունները խնայելով այդ մասին՝ որոշում են վրեժ յուծել նրանից: Հետապնդողից խուսափելու համար նա փոխադրվում է Պոլիս, բայց Պոլիսն ու Մալգարան վերադարձվում են Թուրքիայի կողմից: Սկսվում է հաշվեհարդար հայ մտավորականության հետ: Հարությունյանը աշխատում է անցնել Բուլղարիա, սակայն չի հաղորդվում:

Պոլսում Հարությունյանը արժանանում է գրական շրջանների ուշագրությունն ու համակրանքին: Համախառն հանդիպումներ Մ. Մրմրյանի, Մ. Կյուրճյանի, Զ. Սալյանի, Թեոգիկի, Վ. Թեթևյանի, Զարիֆյանի հետ նոր լրջ ու թափ են հաղորդում նրա գրչին: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրերին Հարությունյանը հանգիստանում է ունենում Սիսեմանթի հետ և հանգստացնում թուրքական բանակի կողմից դիմելու գրված ընկերները:

Պոլսում Հարությունյանը Զոհրապի օգնությամբ ընկնի պաշտոն է ստանում Յուսուֆյան

Պարի սպահովագրական ընկերությունում և պաշտոնի բերումով հաճախ գործուղվում գաղափարներու վրա է հասնում առաջին համաշխարհային պատերազմը, Հարությունյանը զբաղվում է պաշտոնից, Այցելու ուսուցչի պաշտոն է վարում Գառ գյուղի Արամյան վարժարանում, ուր պաշտոնավարում էր Հակոբ Օշականը։

Ընթացիկ ժամանակներից հոյակապից առաջ Հարությունյանը մնաց անկախ, հեռու քաղաքական կուսակցություններից, ապա համաշխարհային պատերազմի նախօրեին նրան ամենայն լրջությամբ անհանգստացնում էր հայ ժողովրդի ճակատագրի մասին, Այգ օրերին նրա բնարը համակված էր հոռետեսությամբ, նա բարձրագույն դասի ուսանողներին ղեկ է իր ձայնը բարձրացրեց հանուն արդարության, բնագծով ուղիղ, Այգ շրջանի ողջ ստեղծագործությունը հանդիսացավ նրա հոգեկան խոսքի արտահայտությունը։

Սկսվում են 1915-ի ապրիլի 24-ի առաջին մասսայական ձերբակալությունները, որից զերծ չի մնում Հարությունյանը։ Գառ գյուղի ուսուցչի տեղի հասցեները գտնվում էին ոստիկանության ձեռքում։ Դրությունը տագնապալի էր, կորստանում անխուսափելի Արտահայտման անցնելու և այդ միջանկյալ զուրկ դալու նպատակով մեկ ամիս մնում է թաքստոցում։ Օգոստոսի 8-ին, կիրակի օրը նա մեկնում է Սկյուտար, ուր անմիջապես ձերբակալվում է թուրք ոստիկանի ձեռքով և ուղարկվում Պոլսի Հաչոբ օրը ձերբակալվում է որդուն փնտրելու ելած հայրը։ Հայր և որդի փոխադրվում են Իզմիր և բանտարկվում հայկական եկեղեցում, ենթարկվելով ահաբեկի տանջանքների ու զանազարության։

Կյանքի վերջին տարիներին Հարությունյանը, կրելով Անատոլ Ֆրանսի ազդեցությունը, դար-

ձել էր ստոիկյան, բառի փիլիսոփայական իմաստով։ Նա կամքի ուժ, տոկունություն էր ձեռք բերել, և այդ էր պատճառը, որ մարտիրոսաբար ընդունեց մահը։

1915-ի սեպտեմբերի 1-ին (հին տոմարով օգոստոսի 19-ին) Իզմիրի կայարանից հեռումի ամայի տարածության մեջ եղբրական մահով ավարտվեց հոր և որդու կյանքը։

Հասարակական միտքն ու մամուլը իր ժամանակին բարձր են գնահատել Հարությունյանի գրական ժառանգությունը, նրա տեղը հայ գրականության մեջ, նրա մասին խոսք են ասել հայ գրականության ճանաչված գեներալներ՝ Զ. Նալբանդյան, Ռ. Պարպերյան, Սիպիլը, Օշականը, Գաղանձյանը, Շամսեդինյանը, Ղազարյանը, Ս. Արմենը, Վ. Հարությունյանը և ուրիշներ։

1937-ին Փարիզում «Նահատակ գրագետներ»-ի բարեկամներին հրատարակությամբ Հարությունյանի մահից 22 տարի հետո, լույս տեսավ նրա «Արձակ էջեր և քերթվածներ» հատընտիրը 100 օրինակ տպաքանակով, որով մոռացությունից փրկվեց հայ գրականության երախտավորը։

1968 թ. «Հայաստան» հրատարակչությունը լույս ընծայեց նրա երկերի հատընտիրը «Իշխան»-ով անմիջապես խորագրով։

Արտաշես Հարությունյանը իր հարուստ գրական ժառանգությամբ խոր հետք է թողել հայ գրականության անդամատանում, հարստացրել մեր մշակույթը իր արժեքավոր ստեղծագործություններով, գրաքննադատական, հրապարակախոսական հոդվածներով, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը։

Ա. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԲՈՒՂԱՐԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ

Հայ տպագրության բազմաթիվ օջախներ են ստեղծվել աշխարհի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում։ XIX դարի երկրորդ կեսից Բուլղարիայի Սոֆիա, Վառնա, Ռուսե, Պլովդիվ և այլ քաղաքներում նույնպես սկսվում է հայ տպագրությունը։ Զբաղվում են գրաձուլությամբ և տպոհրի պատրաստմամբ, տպագրական-գրաչափական սարքեր են բերում ուրիշ երկրներից։ Պրաձուլարանի հիմքը դնում է գրաձուլիչ Հակոբ Մեղունյանը։

Տարբեր ժամանակներում Բուլղարիայում գոյություն են ունեցել մի քանի հայկական տպարաններ, ըստ որում 5-ը՝ միայն Վառնայում։ Հայտնի են, օրինակ, Վառնայի «Բրադուր», «Արևելյան», «Գ. Ենոքյան», Սոֆիայի՝ «Մարտա», «Պալատյան մամուլ», Ռուսեի

«Թյուֆենկեյան» տպարանները։ Հայկական տպարաններում տպագրվել են նաև բուլղարերեն գրքեր 1841—1844 թթ. Ցարգրադում (Կ. Պոլս) Թագևոս Դիմիթրևի տպարանում հրատարակվել են երեք գիրք։ Հետագայում, Թ. Դիմիթրևյանը հրատարակում է 77 անուն բուլղարերեն գրքեր։ Տպագրության ասպարեզում մեծ ջանքեր է թափում նաև Ա. Մինասյանը։ Նա 1856—1873 թթ. իր իսկ հիմնած տպարանում հրատարակում է 97 անուն բուլղարերեն գրքեր և մի շարք թերթեր («Գալազա», «Մեկն-դոնիա», «Ջոնիցա» և այլն)։ Հակոբ Ռոյալյանի տպարանը ևս մեծ գործ է կատարել Բուլղարիայի գրքեր լույս ընծայելու գործում։ Ցարգրադում, մինչև Բուլղարիայի ազատագրումը, հրատարակվում են 452 բուլղարերեն գիրք,